ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2019 թվականի առաջին կիսամյակում մարզպետի կողմից ընդունվել են 34 որոշումներ և 60 կարգադրություններ,աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են 87 հրամաններ:

2019 թվականի հուլիսի 01-ի դրությամբ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 3007 և ելք են արվել 3365 փաստաթղթեր:

Մարզպետարանի աշխատակազմում 2019թ հուլիսի 01-ի դրությամբ թափուր են մարզպետարանի՝ 1 վարչական, 3 քաղաքացիական ծառայողների պաշտոնների հաստիքներ:

Սահմանված կարգով,տարբեր ծրագրերով ՀՀ վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից իրականացվել են քաղաքացիական ծառայողների վերապատրստման աշխատանքները, ըստ որի մասնագիտական վերապատրաստում անցան թվով 10 քաղաքացիական ծառայողներ:

Մարզպետարանի ստորաբաժանումները մեծ ուշադրություն ենջ դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը, ուսումնասիրմանը և լուծմանը:2019թ հունվարի 11-ի ՀՀ Վայոց ձորի մարզպետի թիվ 1 որոշմամբ մարզպետի և ազգաբնակչության անմիջական կապը ամրապնդելու նպատակով սահմանվեց նոր կարգ՝ ամենամսյա ընդունելությունները իրականացվում են համայնքներում,իսկ բարձրացված խնդիրները ուսումնասիրվում են տեղերում: 2019 թվականի հաշվետու ժամանակաշրջանում մարզպետի մոտ կատարվել է 535 քաղաքացիների ընդունելություն:

Տարվա ընթացքում ՀՀ Նախագահի ու վարչապետի աշխատակազմից, ինչպես նաև հանրապետական գործադիր իշխանության մյուս մարմիններից ստացվել ու ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 30 դիմումներ, որից՝ 5-ը ստացվել են Ջերմուկի, 10-ը Վայքի, 15-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2019 թվականի առաջին կիսամյակում 302 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 7 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր,իսկ 17-ը պետպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական,կենցաղային,գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատնքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ, ապահովվել է մարզի կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների, զինկոմիսարիատների, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ :

Համակարգվել է 2019 թվականին փետրվարի 17-ին Մալիշկա համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունների գործընթացը: Իրականացվել է ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման աշխատանքների նկատմամբ վերահսկողություն:

Համակարգվել է 2019 թվականի մարտի 23-ին և 2019 թվականի հունիսի 8-ին կայացած համապետական շաբաթօրյակների կազմակերպման աշխատանքները և համապատասխան տեղեկատվություն ՏԻՄ օրենքի պահանջների կատարման նպատակով, աշխատանքներ են տարվել ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման, ընդունված որոշումները օրենքով սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնելու, որոշումները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու, ընդունված իրավական ակտերի և բյուջեների հրապարակայնության ապահովման ուղղությամբ դրանք սահմանված ժամկետներում ու կարգով հրապարակվել են համայնքապետարանների կայքերում:

ՀՀ Սահմանադրությանը և ընթացիկ օրենսդրությանը հակասող մարզի ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումները մարզպետի պահանջով վերանայվել են: Համակարգվել են համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ավագանուն տրված եռամսյակային հաղորդումների և տարեկան հաշվետվությունների տրման աշխատանքները:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքներում ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով մարզի բոլոր համայնքներում տեղադրվել են ցուցատախտակներ, տեղեկատվությունը տեղադրվել է համայնքների պաշտոնական կայքերում, որոնց միջոցով համայնքների ազգաբնակչությունը իրազեկվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ: Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 21.12.2018 թվականի թիվ 364-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 10.05.2019 թվականի թիվ 23 որոշման պահանջների 2019 թվականի մայիսի 13-ից 24-ը իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքում: Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Մարզի համայնքներում համայնքային ծառայության 2 թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ, որոնց արդյունքում համալրվել է 1 պաշտոն:
2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնների թիվը 142 է:

Կրթության,մշակույթի և սպորտի ոլորտում, իրականացվել են հետևողական ու արդյունավետ աշխատանքներ: 2019 թվականին մարզի 45 հանրակրթական և 3 ավագ դպրոցներում սովորում են 6458 աշակերտներ: Հանրակրթության ոլորտում մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում է եղել պետական ուսումնական ծրագրերի իրականացումը և երեխաների հայեցի դաստիարակումը: Անցած ուսումնական տարում կազմակերպված անցան առարկայական օլիմպիադաները՝ մարզային փուլին մասնակցեցին 512 աշակերտներ, որից՝ 48 իրավունք նվաճեց հանդես գալու հանրապետական փուլին:

2018-2019-ուս տարում հանրակրթական դպրոցների 9-րդ դասարան ավարտեցին 568 աշակերտներ, իսկ 12-րդ դասրան՝ 416 աշակերտներ, որից՝ 200-ը մասնակցեցին միասնական ավարտական քննություններին:

Մշակույթի բնագավառում վերջին շրջանում նկատվում է ակտիվություն՝ ,,Եղեգնաձորի մշակույթի տան,, թատերախումբը բեմադրեց ''Ատամնաբույժն արևելյան,, ներկայացումը: Վերջերս թատերախումբը հյուրախաղերով հանդես եկավ Սյունիքի մարզում և ԼՂՀ-ում:

Մարզի 90 հոգանոց պատվիրակությունը,որում ընդգրկված են մարզի բոլոր 7 համայնքների մարզիկները, մարզպետի գլխավորությամբ կմասնակցի 2019թ օգոստոսի 6-ին Ստեփանակերտում մեկնարկող 7-րդ Համահայկական խաղերին:

<u>Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում իրականացվել են՝</u>

1.1 Պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի և հայտերի կազմում և բյուջետային գործընթացի իրականացում

Կազմակերպվել է մարզպետարանի և մարզպետարանի պատվիրատվությամբ 2020թվականի պետական բյուջեի հաշվին կատարվող ծախսերի բյուջետային ֆինանսավորման հայտերի, 2020-2022թթ միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման և ներկայացման աշխատանքները.

1.2 ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի ծախսերի կատարման նախահաշիվների կազմման և դրանց ֆինանսավորման գործընթացի իրականացում

Իրականացվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի ֆինանսավորման ապահովումը: Հաստատվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի՝ չափորոշիչներին համապատասխան կազմված նախահաշիվները, ֆինանսական պարտավորությունները:

Կազմակերպվել է մարզպետարանի հաշվապահական հաշվառման վարումը հաշվապահական հաշվառման կարգին համապատասխան:

1.3 Գնման գործընթացի իրականացում և համապատասխան ընթացակարգերի ապահովում

Կազմակերպվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կարիքների համար ապրանքների, ծառայությունների և աշխատանքների նախատեսված ծավալով ձեռքբերումը «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Սահմանված ժամկետում հաստատվել է արձանագրությունները, տեխնիկական բնութագրերը, գնման պայմանագրերը, համաձայնագրերը և ներկայացվել է լիազոր մարմնի հաստատմանը:

Մարզի գյողատնտեսության և բնապահպանության բնագավառում իրականացվել են՝ պետական աջակցության ծրագրերի շրջանակներում, շուկայականից ցածր գներով, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով մարզի հողօգտագործողներին է հատկացվել գարնանացան գարու 0.95տ, առվույտի 1.124տ, աշնանացան ցորենի 7.44տ, կորնգանի 0.98տ, եգիպտացորենի 0.027տ, սիսեռի 0.056տ սերմացուներ:

Եղեգնաձոր ՋՕԸ-ի կողմից իրականացվում է ոռոգման ջրի մատակարարում՝ ըստ ջրապահանջի: Առ 01.07.2019թ տրվել է 2 650 000մ^3 ջուր /21.45%/, հասույթը կազմել է 29 150 000 դրամ, գանձվել է 32 240 000դրամ:

Ներկայացվում է 2018-2019թթ ցանքերի համեմետական վերլուծությունը աղյուսակի տեսքով.

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տարածությունը / հա		
		2018թ	2019թ	Տարբ.
1	Հացահատիկ և հատիկ	1907	1755	-152
2	Բանջարեղեն	411	349	-62
3	Բոստան	31	14	-17
4	Կարտոֆիլ	160	124	-36
5	Պտուղ, հատապտուղ	2514	2533.5	19.5
6	Խաղող	1200	1255	55
7	Կերային կուլտուրաներ	1984	1794	-190
8	Տեխնիկական	21	23	2
8	Ընդ.ցանքատարածություն	4480	4060	- 420

2019թ. մարզի ընդհանուր ցանքային տարածությունը կազմել է 4060 հա,

Մարզի Արփի և Մալիշկա համայնքներում սկսվել է հացահատիկի հունձը, կուտակվել է 3420տ խոտ, այս պահի դրությամբ արտադրվել է 12տ կարտոֆիլ, 29տ բանջարեղեն, 100տ պտուղ և հատապտուղ:

Համաձայն համայնքների ղեկավարների կողմից ներկայացված տեղեկագրի մարզում առկա է 23 հացահատիկահավաք կոմբայն, որոնցից սարքին են 20-ը: Եղած կոմբայնները բավարար են ըստ գոտիականության ապահովելու հացահատիկի հունձը:

2019թ հունվարի մեկի դրությամբ մարզում առկա է 18523 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր՝ 7773 գլուխ, մանր եղջերավոր՝ 14100 գլուխ, խոզեր՝ 3558գլուխ , թռչուններ՝ 108580 թև և մեղվաընտանիք՝ 23821 փեթակ:

Մարզում առկա է 11249 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություն:

Գործում են 308, ֆերմերային և գյուղացիական տնտեսություններ

որից՝

փոքր տնտեսություն՝ 234

միջին տնտեսություն՝ 39

խոշոր տնտեսություններ՝ 35:

Մարզի ոռոգելի հողատարածքները կազմում են 6622.9 հա, որից վարելահող՝ 2599.8 հա, կամ ընդհանուր վարելահողերի 17 տոկոսը:

Մարզի Արենի, Աղավնաձոր, Ռինդ,Գնիշիկ, Գետափ բնակավայրերում առկա է 7 հակակարկտային կայանքներ, /560հա ծածկողականությամբ/, 2019թ Ելփին բնակավայրում տեղադրվել է ևս մեկ կայանք:Կարկտահարության դեմ պայքարի լիարժեք աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ են ևս 20 հակակարկտային կայաններ:

Մարզպետարանում և բոլոր համայնքներում ֆերմերների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կազմակերպվել են սեմինարներ և մանրամասն ներկայացվել 2019թ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական ծրագրերը:

<u>ՀՀ Վայոց ձորի մարզում 2019 թվականին քաղաքաշինության բնագավառում առաջին կիսամյակում կատարված աշխատանքների մասին</u>

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ-215.0 մլն. դրամ, այդ թվում՝ համայնքային բյուջեի համաֆինանսավորմամբ-37.0 մլն դրամ

<u>Եղեգնաձոր համայնք</u>

- Եղեգնաձոր համայնքում թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում առանց տանիքի-25.0 մլն. դրամ, համաֆինանսավորում -5.0 մլն. դրամ շին. աշխատանքները ընթացքի մեջ է
- Եղեգնաձոր համայնքում թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում տանիքով-37.0 մլն. դրամ, համաֆինանսավորում -7.4 մլն. դրամ շին. աշխատանքները ընթացքի մեջ է

Արենի համայնք

- Ագարակաձոր բնակավայրում մանկապարտեզի շենքի տանիքի մասնակի նորոգում 3.0մլն. դրամ, ջեռուցման համակարգի կառուցում 7.0մլն. դրամ: Ընդամենը 10.0 մլն. դրամ, համաֆինանսավորում -2.0 մլն. դրամ շին. աշխատանքները ընթացքի մեջ են:

- Չիվա բնակավայրում խմելու ջրի արտաքին ցանցի հիմնանորոգում 2 կմ-30.0 մլն. դրամ, համաֆինանսավորում -6.0 մլն. դրամ շին. աշխատանքները ընթացքի մեջ

Մ- Արենի-Խաչիկ-Գնիշիկ Եղեգնաձոր հանրապետական նշանակության ավտոճանապարհի առաջին կիլոմետրում Արենի գյուղի մեջ Արփա գետի վրա կառուցված կամրջի վերանորոգում- 50.0 մլն. դրամ, համաֆինանսավորում -5.0 մլն. դրամ մրցութ չի կայացել

Եղեգիս համայնք

- Արտաբույնք բնակավայրում խմելու ջրագծի արտաքին ցանցի կառուցումմետաղյա խողովակով-9.0 մլն. դրամ, համաֆինանսավորում -1.8 մլն. դրամ շին. աշխատանքները ընթացքի մեջ է
- Գողթանիկ բնակավայրում դպրոցի շենքի տանիքի վերանորոգում – 10.0 մլն. դրամ, համաֆինանսավորում -1.0 մլն. դրամշին. աշխատանքները ընթացքի մեջ է
- Հորբատեղ բնակավայրում օրվա կարգավորիչ ջրամբարի հիմնանորոգում-12.0 մլն. դրամ, համաֆինանսավորում-2.4 մլն. դրամ նախագծա-նախահաշվային աշխատանքները ընթացքի մեջ է
- Հորս բնակավայրում օրվա կարգավորիչ ջրամբարի հիմնանորոգում-12.0 մլն. դրամ, համաֆինանսավորում-2.4 մլն. դրամ նախագծա-նախահաշվային աշխատանքները ընթացքի մեջ է

Գլաձոր համայնք

- Վերնաշեն բնակավայրում ներքին ցանցի խմելու ջրի վերանորոգում-20.0 մլն. դրամ, համաֆինանսավորում-4.0 մլն. դրամ շին. աշխատանքները ընթացքի մեջ է

2. Վարձատրվող հասարակական աշխատանքների շրջանակներում իրականացվել է –3.0 մլն. դրամի աշխատանքներ՝

Համայնքային համաֆինանսավորում-1.827 մլն դրամ

Վայք համայնք

- Ազատեկ բնակավայրի հուշաքարի և եկեղեցու հարակից տարածքի բարեկարգում-0.75 մլն. դրամ, համաֆինանսավորում-0.108 մլն. դրամ

Արենի համայնք

- Չիվա բնակավայրի խմելու ջրի կապտաժի կառուցում-0.75 մլն. դրամ, համաֆինանսավորում-0.72 մլն. դրամ
- Ելփին բնակավայրի գերեզմանոցի ցանկապատի կառուցում-0.75 մլն. դրամ, համաֆինանսավորում-0.817 մլն. դրամ

Զառիթափ համայնք

- Նոր-Ազնաբերդ բնակավայրի հուշաքարի հարակից տարածքի բարեկարգում և ներհամայնքային ճանապարհների բարեկարգում-0.75 մլն. դրամ, հազ. դրամ համաֆինանսավորում-0.812 մլն. դրամ

Աշխատանքներն ավարտված են :

3.Համայնքային բյուջե - 80,231 հազ:դրամ,որից

Զառիթափի համայնքի՝

1.Զառիթափ բնակավայրում գազատարի ներքին ցանցի կառուցում - 29,028 հազ.դրամ

2.Սերս և Բարձրունի բնակավայրերի ջրամատակարարման համակարգի կապտաժի վերանորոգում – 35,203 հազ.դրամ

Ընդամենը համայնքում՝ 64,231հազ.դրամ:

Ջերմուկ համայնքի՝

1.Ջերմուկ քաղաքի փողոցների փոսային նորոգում – 16,000 հազ.դրամ:

<u>Ճարտարապետության բնագավառ</u>

Աշխատանք է տարվել միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հարակից տարածքներում գտնվող շինությունների լիարժեք ուսումնասիրմանը և խոչնդոտ առաջացնող շինությունների վերացման ուղղությամբ:

Համաձայնություն ենք տվել ՀՀ կառավարության որոշումների մեջ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններին և որոշման նախագծերին՝ թվով 7 հատ:

Նշված ժամանակահատվածում առաջարկություն ենք ներկայացրել ՀՀ քաղաքաշինական պետական կոմիտե Եղեգնաձոր, Ջերմուկ համայնքներում հողի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ՝ թվով 2 հատ:

Նշված ժամանակահատվածում առաջարկություն ենք ներկայացրել ՀՀ քաղաքաշինական պետական կոմիտե Եղեգնաձոր, Ջերմուկ քաղաքների գլխավոր հատակագծերում փոփոխություն կատարելու վերաբերյալ՝ թվով 2հատ, որոնք ընթացքի մեջ են:

Բացատրական աշխատանքներ ենք տարել մարզում շինթույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի գործարկման վերաբերյալ և ընդունել ենք թվով 47 շինարարության թույլտվություն ու 1 քանդման թույլտվություն, 1 շինարարության թույլտվության կասեցում համայնքներից.:

Բոլոր համայնքներին պարբերաբար տեղեկացվել է քաղաքաշինության բնագավառում օրենսդրական ակտերում կատարված փոփոխությունների մասին և ուսումնասիրվել է համայնքներում կայացված որոշումների (քաղաքաշինության բնագավառում) համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Հետևողական աշխատանքներ ենք տանում համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող վարկային թիվ 5222-ԱՄ ծրագրի շրջանակներում Եղեգնաձոր քաղաքում կառուցվելիք նոր հիվանդանոցի շենքի հողհատկացման, որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրման, հողամասի բաժանման, ՀՀ անշարժ գույքի կադաստրում գույքի գրանցման, հողամասերի փոխանակության վերաբերյալ որոշման նախագծի կազմման և այլ աշխատանքների ուղղությամբ:

2019թ առաջին կիսամյակի դրությամբ մարզում ունենք գրանցված 229 հատ 4-րդ կարգի վթարային շենք.

ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ

Վայոց ձորի մարզում ազգաբնակչությունը ապահովված է շուրջօրյա խմելու ջրով:

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է թվով 7 ջրամատակարարման համակարգեր :

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի բաժանորդների թիվը 8870 է, 683-ը իրավաբանական կազմակերպություններ:

Մարզի մյուս բնակավայրերի ջրամատակարարման համակարգերը շահագործվում են համայնքապետարանների կողմից :

Առաջարկվել է համայքի ղեկավարներին անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ջրամատակարարման համակարգերում արձանագրված թերությունները շտկելու ուղղությամբ, որի ընթացքում 2019թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզում խմելու ջրի հետ կապված բռնկումներ չեն արձանագրվել:

Վայոց ձորի մարզի 8 համայնքների 44 բնակավայրերից գազաֆիկացված է 17 բնակավայրը: Այս բնագավառում առաջնահերթությունը մնում է չգազաֆիկացված բնակավայրերի գազիֆիկացումը:

Գազաֆիկացման առկայությունը կնպաստի անտառների, էկոլոգիայի և դրանից բխող խնդիրների լուծմանը :

Մարզում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից բաժանորդների թիվը 2019թ-ի առաջին կիսամյակում 8184 է, որից 4298 բազմաբնակարան շենքերի բնակարաններն են, իսկ 3886 անհատական տներ: Բաժանորդների թիվը 2019 թ-ի առաջին կիսամյակում ավելացել է 70-ով:

Մարզի 8 համայնքների 44 բնակավայրերում իրականացվում է աղբահանություն համաձայն ավագանու կողմից հաստատված գրաֆիկի: 2019թ-ի առաջին կիսամյակի դրությամբ շահագործվող աղբավայրերի թիվը 14 է, որոնք պարբերաբար մշակվում և հողածածկվում են:

Մարզի 8 համայնքների ղեկավարների հետ համագործակցելով հավաքագրվել են համայնքներում առկա ***ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառի*** հիմնախնդիրները, որոնք պարբերաբար թարմացվում են:
ատնտեսության զարգացմանն ուղղված պետական օժանդակության ծրագրերը:

Ճանապարհաշինություն

2019թ. ՀՀ Վայոց ձորի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման ծրագրի շրջանակներում առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է 267 կմ ճանապարհների ձմեռային և 184.2 կմ ընթացիկ պահպանության աշխատանքներ, իսկ մարզային /տեղական/ նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա նույն ծրագրի շրջանակներում իրականացվել է 146.3 կմ ձմեռային և 68.9 կմ ընթացիկ պահպանության աշխատանքներ:

2019թ. առաջին կիսամյակում կազմվել և ներկայացվել է 2020 – 2022թթ. մարզային /տեղական/ և համայնքային նշանակության ավտոճանապարհների, կամուրջների հիմնանորոգման, ինչպես նաև ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային ֆինանսավորման հայտը:

2019 թվականին մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառուցվածքների /կամուրջներ/ հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվել և իրականացվել է հետևյալ աշխատանքները

1.Մ2 – Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 140-րդ կիլոմետրում 100 մետր հենապատի կառուցում - 146 մլն. դրամ /աշխատանքներն ավարտվել են/

2 Մ2 – Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ101.4 - կմ108.4 հատվածի հիմնանորոգում - 1203.7 մլն. դրամ /մրցութային փուլում է/

3. Մ2 – Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ126.1 - կմ131.5 հատվածի հիմնանորոգում - 757 մլն. դրամ /մրցութային փուլում է/

4. Մ2 – Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ139.0 - կմ142.0 հատվածի հիմնանորոգում - 316.2 մլն. դրամ /մրցութային փուլում է/

Համաշխարհային բանկի միջոցներով նախատեսվում է հիմնանորոգել հետևյալ ճանապարհները

2.Մ2 – Գետափ 2.2 կմ - 346 մլն. դրամ / մրցութային փուլում է/

3.Տ – 9 – 21 /Շատին/ - Հորբատեղ 6 կմ - 653..4 մլն. դրամ /աշխատանքները ընթացքի մեջ են/

Մարզի տարածքում միջհամայնքային ուղևորափոխադրումները իրականացվում են ընդհանուր օգտագործման ավտոմաբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների միջոցով, մրցութային կարգով:

2019 թվականին նախատեսվում է ավելացնել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումներ մարզի ևս 4 բնակավայրերում:

,,Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի մատուցման,, ծրագրով կազմակերպվել է 15 երթուղիներում մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխման աշխատանքներ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ՍՈՑԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2019Թ. ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՄԱՍԻՆ

Սոցիալական ապահովության բնագավառ

2019 թվականի 1-ին կիսամյակում նպաստ է ստացել 1877ընտանիք, որից ընտանեկան նպաստ՝ 1408 և սոցիալական նպաստ՝ 469 ընտանիք: Վճարվել է 326,7մլն դրամ նպաստ: Հրատապ եռամսյակային օգնություն է ստացել 111 ընտանիք, վճարվել է 9,7 մլն դրամ: Ավանդների փոխհատուցում է ստացել 88 մարդ, վճարվել է 17,5 մլն. դրամ :

Մարզում կենսաթոշակառուների թիվը 9217 է, որոնց վճարվել է շուրջ 2,2 մլրդ. դրամ կենսաթոշակ:

Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցվել է 925 գործազուրկ: Աշխատանքի է տեղավորվել 140մարդ:

Հաշվառվել է բնակարանի բարելավման կարիք ունեցող 43 հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներ :

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության **Առողջապահություն**

- Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է՝

2019թ.–ին 767467.9 հազ. դրամ: 2019 թվականի առաջին կիսամյակում վճարովի ծառայությունը կազմել է մոտ 33 870.0 հազ դրամ ,նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում եղել է 27 525.5 հազ.դրամ :

- 2019թ.-ին առաջին կիսամյակի ընթացքում պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 56 տեղից ուղեգրող հանձնաժողովի կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 17 քաղաքացի, առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 3 մեծահասակ և 4 երեխա:

- 2019 թվականին պոլիկլինիկաներում և ամբուլատորիաներում աշխատող բժիշկների աշխատավարձերը բարձրացվել են 15%-30%-ով:

- 2019 թ. ընթացքում հաշվառվել է 157 ծնունդ, 2018 թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 7-ով:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժինը հաշվետու ժամանակահատվածում մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության շրջանակներում մշակել է 2019 թվականի մարզպետարանի Տարեկան աշխատանքային ծրագիրը:

Բաժինն անմիջականորեն մասնակցել է մարզի ընթացիկ և հեռանկարային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի նախագծերի կազմման աշխատանքներին:

2019 թվականին կատարվել է մարզի համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի, ծրագրերի կատարման ընթացքի և արդյունքների վերլուծություն:

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման 28 ներդրումային հայտ: Սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվել և հավանության է արժանացել 8 հայտ: Համայնքի ղեկավարներին առաջարկվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել ծրագրերի իրականացման մրցույթներ՝ ապահովելով արդյունավետ, հնարավորինս թափանցիկ և նվազագույն ռիսկերով մրցութային գործընթաց՝ միևնույն ժամանակ նախագծանախահաշվային փաստաթղթերը լրամշակելիԻրականացվել է մարզում զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման և մարզի տարածքում տնտեսվարող սուբեկտների գործունեության ընդլայնման և արդյունավետության բարձրացման աշխատանքներ:

Տուրիզմի տարածաշրջանային կենտրոնի հետ մշակվել է հյուրատների զարգացման ծրագիր, որի մրցույթը հայտարարվել է և 25 հյուրատների ներդրումային ծրագրերը կֆինանսավորվեն հուլիս ամսին:

Մարզում զբոսաշրջության առավել զարգացման և աշխուժացման նպատակով թարմացվել են ներդրումային ծրագրեր և ներկայացվել ՀՀ կառավարություն, ինչպիսիք են՝ Նորավանքի կիրճի, Արենի գյուղի և Մոզրովի քարանձավի ներդրումային ծրագրերը:

Այժմ զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համատեղ մշակվում են Վայոց ձորի տուրիստական այլընտրանքային եղանակների զարգացման ուղղությունները, հեռանկարները և իրականացման ռազմավարությունը:

<<20 անիրանականանալի իրականություն>> ծրագրում ներառված է Վայոց ձորից պատմամշակության և տեսարժան վայրերի 6 օբյեկտ: Տվյալ ծրագրի շրջանակներում բաժնի և Զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համատեղ մշակվել են ենթակառուցվածքների ստեղծման, տուրիստական փաթեթների պատրաստման նախագծերը հաշվի առնելով ոլորտային մարմինների կողմից արված դիտողությունները:

Ներդրումային կարևոր ծրագրերի մասին՝

- Վայքի Ազատեկ գյուղում առաջիկայում կկառոցվի 2 մեգավատ հզորությամբ ֆոտովոլտային կայան,ինչն իր հերթին մշտական աշխատանքով կապահովվի 5-ից 8 քաղաքացու:

- «Թուֆենկյան հոսփիթալիթի» ՍՊԸ-ի կողմից Արենի համայնքի Արենի բնակավայրում կառուցվում է 360 անձի համար նախատեսված «Արենի Վայն Ռեզորթ» հյուրանոցային համալիրը, որը ընկերության մինչ այժմ Հայաստանում կառուցած ամենամեծ հյուրանոցային համալիրն է: Ներկայումս կատարվել են կառուցապատման աշխատանքների 20-30 %-ը և նախատեսվում է աշխատանքներն ամբողջությամբ ավարտել 2021 թվականի ավարտին: Ներդրման ընդհանուր գումարը կկազմի շուրջ 8 մլրդ. ՀՀ դրամ, որի հետևանքով ստեղծվելու է 80 նոր աշխատատեղ:
- Շվեյցարահայ հայտնի գործարար Վահե Գաբրաշի կողմից Արենի համայնքի Արենի բնակավայրում ձեռք է բերվել 25 հա վարելահող, որտեղ նախատեսվում է մշակել Արենի տեսակի խաղող՝ տնկելով նույքան տարածության վրա ինտենսիվ խաղողի այգի: Գործարարը խաղողի այգիներում տարածվող հիվանդությունների հայտնաբերման, խորհրդատվության և կանխարգելման նպատակով Արենի գյուղում կկառուցի նաև լաբորատորիա: Ներդրման ընդհանուր գումարը կկազմի մոտ 300 մլն. ՀՀ դրամ, որի արդյունքում կստեղծվի ավելի քան 20 նոր աշխատատեղ:
- Գործարար Միեր Տերտերյանի կողմից Արենի համայնքի Չիվա և Ռինդ բնակավայրերում կատարվում է ներդրում, որի շնորհիվ այժմ արդեն տնկվել է 35 հա խաղողի ինտենսիվ այգի: Ըստ ծրագրի նախատեսվում է կատարել ընդհանուր մոտ 2.2 մլրդ ՀՀ դրամ գումար, որի արդյունքում կհիմնվի ևս 70 հա ինտենսիվ այգի և կկառուցվիլ գինու գործարան 0.5 հա մակերեսով: Ներկա պահին գործարարի կողմից ներդրված գումարը կազմում է մոտ 500 մլն. ՀՀ դրամ, ստեղծել է 90 աշխատատեղ:
- Զառիթափի Սարավան գյուղում կկառուցվի 3,5 և 3,7 մեգավատ հզորությամբ երկու ֆոտովոլտային կայաններ, որը աշխատանքով կապահովվի 27 քաղաքացու:

Հողաշինության և հողօգտագործման ոլորտում՝ հաշվետու ժամանակաշրջանում՝ 2019 թվականի առաջին կիսամյակում, համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշմամբ Արենիի, Աղավնաձորի, Գլաձոր և Ռինդ համայնքներում՝ բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրարժեքից - բարձրարժեքի՝ փոփոխության են ներկայացվել 223.5 հա, որից փոփոխվել է խաղողի այգի 55.0հա , պտղատու այգի 19.5 հա, 149.0 վարելահող, որոնք էլ կարծածվեն մարզի 2019 թվականի հողային հաշվեկշռում: Այս գործընթացը շարունակվում է:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 14 առաջարկություններ, որից 6-ին հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն՝ հողերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ, որոնք էլ սահմանված կարգով փոխանցել ենք համայնքի ղեկավարներին, մնացած 8-ը ընթացքի մեջ են:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի Գլաձոր և Մալիշկա համայնքներում, հայտնաբերված թերությունների վերացման համար առաջարկություն է ներկայացվել և հստակ ժամկետ տրվել:

01.07.2019